ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 39-Լ

«28» 04 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵՔԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՐԺԵՔԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 71 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 884-Ն որոշումով սահմանված՝ «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման» կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ մասերով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար ստեղծել փորձագիտական հանձնաժողով (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Չախոյան -	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Միեր Մկրտչյան -	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,
Սոնա Հովսեփյան -	ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ,
Տաթևիկ Սարուխանյան -	ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ,
Մարուշ Ղահրամանյան -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Արմինե Նազարեթյան -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ:

2. Հանձնաժողովում, ըստ անհրաժեշտության, մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով կարող է ընդգրկվել արխիվային գործի մասնագետ:

3. Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների և կայազորների զինվորական դատախազությունների փորձագիտական հանձնաժողովներն իրենց կազմած մշտական և երկարաժամկետ պահպանման գործերի ցուցակները, դատախազությունում պահպանվող ժամկետանց փաստաթղթերը ոչնչացման համար առանձնացնելու մասին ակտերը համաձայնեցնում են

համապատասխանաբար՝ Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների հետ:

4. Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների և կայազորների զինվորական դատախազությունների փորձագիտական հանձնաժողովների կազմում որպես քարտուղար ընդգրկել ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետին:

5. ՀՀ գլխավոր դատախազության, Երևան քաղաքի, մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների փորձագիտական հանձնաժողովների կազմած մշտական և երկարաժամկետ պահպանման գործերի ցուցակները, դատախազությունում պահպանվող ժամկետանց փաստաթղթերը ոչնչացման համար առանձնացնելու մասին ակտերը հաստատում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը:

6. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների փորձագիտական հանձնաժողովների կազմած մշտական և երկարաժամկետ պահպանման գործերի ցուցակները, դատախազությունում պահպանվող ժամկետանց փաստաթղթերը ոչնչացման համար առանձնացնելու մասին ակտերը հաստատում է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազը:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 71 հրամանը՝ հետագա բոլոր փոփոխություններով:

9. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

10. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի

Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ